



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ**

«22» հունվարի 2019թ.

№ 1/188-Ա

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**Ռ.ՄՈՎԱՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 02/2019 եզրակացությունը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականությունները չկատարելու (ոչ պատշաճ կատարելու) համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության փաստաթղթային հսկողության թիվ 2 բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Ռուստամ Մովսիսյանի նկատմամբ կիրառել «Մաքսային ծառայողի պաշտոնի իջեցում» կարգապահական տույժը և նշանակել նույն բաժնի ավագ մաքսային տեսուչ:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին – սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 1/23/2019 10:28:21 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142



Դ.ԱՆԱՆՅԱՆ